Ծուշանիկ Կուրղինյան

Միայն այդ տարբեր նմանների հետ

Տանջանքն եմ օրհնում վարձված բանվորի,
Որ առավոտից մինչև ուշ գիշեր
Ապրելու համար, փոր հացին գերի՝
Ոսկորն է ցավում, թմրում մկաններ:

Սև քաղցն եմ օրհնում, անվերջ գալարում,
Որդերի անկուշտ, ագահ ոհմակի,
Որ սուր ճանկերով մտքեր են լարում,
Գրգռում ջերմը բաց ախորժակի:

Վաստակն եմ օրհնում ես գիշեր ցերեկ
Թե՛ ծեր, թե՛ ջահել աշխատավորի,
Որ կորաքամակ, չեն հոգնում երբեք
Հասույթ պատրաստել լայնաղիք փորի:

Անհաց խուժանի ճիչն ու վայնասուն
Օրհնում եմ սրտանց, ցանկալով ավյուն . . .
Ճարպի բեռնակիր ահոգ-անասուն
Կուշտերին մաղթում արևշատություն . . .

Միայն այդ տարբեր նմանների հետ
Շղթան կյանք չունի, զրկանքը՝ աղբյուր,
Եվ ծագող վեճի պայքարն է հավետ,

Եվ ծագող վեճի պատճառ միշտ բյուր:

1908 թ. 13 հունիսի